



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

թիվ 52

ՅՈՒՆԻՍ 7/20 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ



Երկրորդ տարի : 7/20 Յուլիս : Թիւ 52

Ս. ՊՕՂՈՍ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ՝

Ա. ՔՐԻՍՏՈՍ ՆԱԽԱԳՈՅ

(Շարունակութիւն)

Ս. Պօղոսի քրիստոսախօսութեան ամէնէն հակիրճ ամփոփոյթը սա բանաձեւին մէջ համառօտուած է «Տէրն մեր Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ» [Ա. Կոր. Ա. 9: Հռ. Ա. 4.], եւ թէպէտ այս բանաձեւին մէջ մը մասը գոյութիւն ունի առաջուց և կը յանգի մինչ առաքելական քարոզութիւնը, բայց Ս. Պօղոս է որ զայնս մրաձայլ կը պատկերապէս և այն բանաձեւին կու տայ աստուածաբանութեան պատմութեան համար յոյժ շահեկան եզոյլ իմաստի լիութիւն մը:

Չորս Աւետարաններուն մէջ, ի մասնաւորի խնդիր է դիտարկել, նոյնինքն Յիսուս է Փրկիչը թէ, ոչ. այսինքն Մեսիան, Դաւթի շառ

Ղաւարին ու նախատիպը, Խորայէլի ակնկալութիւնն ու յայտը: Հերովդէս կը տեղեկանայ սնոր ծնանելու տեղը, Յովնանէս Մկրտիչ զանի մատնացոյց կ'ընէ, դիւահարները կը հուլակին զանի, Պետրոս զանի կը դաւանի, նոյնինքն Յիսուս ալ համարձակ իբր իր սեփականութիւնը կը պահանջէ այդ արտոյտը՝ որ կը համառօտէ իր իշխանութիւնը. Հրէից մօլեռանդ աշակերտներն ալ հեղնօրէն զայն սնոր կը վերագրեն:

Բայց մինչ Համապատումները մեր առջև կը պարզեն, այսպէս ըսելու համար, այս սատրիճանական գննութեանց արդիւնքը, ու միշտ խիստ յստակ կը պահեն զգացումը այն զօղին՝ որ կը միացնէ Մեսիայի հանգամանքը խոստումներու իրագործման հետ, Սուրբ Պօղոսի համար արդէն ծանօթ և անվիճելի իրողութիւն մըն է Յիսուսի նշանացումը Քրիստոսի հետ։ Քրիստոս ակնյայտնի կերպով խորտակեց հրեական ամէն կապերը՝ որոնց յիշատակը գրեթէ ջնջուած է։ Փրկչին սեփական աւտուներ, յատուկ անուան պէս կրնայ այլևս յօգ չառնուէ։ Քրիստոս կը մեռնի՝ որպէս զի մենք յաղթական հանդիսանանք մահուան վրայ, յաբուութիւն կ'առնուէ մեզ իր կեանքին միաւորելու համար, փառաւորապէս կը թագաւորէ՝ մեզ ալ իր փառքին մասնակից ընելու համար։ Իր գործը գերաշխարհային բան մըն է, և այն վայրն ուր կը կատարուի՝ գերերկրային։ Քրիստոնեաներու՝ Քրիստոսի հետ միութենէն նոր էակ մը կը գոյանայ, խորհրդական Քրիստոսը, ուր ա'լ որոշել չկայ Հրէին ու հեթանոսին միջև, Յոյնն ու քարքարոսին միջև, գերիին ու աղաւթն միջև, զի ամէնքն ալ «մէկ են ի Քրիստոս Յիսուս» [Գաղ. Գ, 28], երբ նկատի առնուի թէ Պօղոս իր ատենի քրիստոնէական մտածումն է որ կը ցոլացնէ անշուշտ, և թէ՛ իր թուղթերը կանխած են Աւետարաններու խմբագրութիւնը, մարդ կը սքանչանայ թէ ինչ մեծ ճիգ թափած ըլլալուն աւետարանիչք անոնց պատմական վերակազմութեան համար, որպէս զի Յիսուսի կենաց ու խօսքերուն վրայ չի ստուերագծին իրենց ընդի մըջավայրի գաղափարներն ու զգացումները։

Գիտենք որ «Տէր» բառը, Եօթնասանից մէջ, սովորական թարգմանութիւնն է այն անձառ, քառագլի Նուիրական բառին, Այդ միեւնոյն ախաղաղ կրնար արուել նաև Մեսիայի, թէ՛ իբր աստուածպետական թագաւոր՝ Եւովայի ներկայացուցիչը, և թէ՛ Սաղմոսեիզուի մարգարէութեան մէջ նշանակուած իմաստով. «Տէրը ըստ իմ Տիրոջ»)

1 Այսպէս իրիւղո՛ւն բառը, յատուկ տնտեսն պէս, և տուննց տկնարկութիւն մը բռն վանդտելելու Մեփախի տտուգարանական իմաստին, շուրջ 94 անգամ անյօդ կիրարկուած է: Եւ տուննց հաշուելու հէ իրիւղո՛ւ. պի՛ն իս. Իսո՛ւն իրիւղո՛ւն և իս. Ի.՝ Մինչ Ահետարաննէ բուն ձեջ—էհաշուելով իսո՛ւն իրիւղո՛ւն բացատրութիւնը՝ որ յոյժ ցանցաւ գործածուած է— իրիւղո՛ւն բառը հասարակօրէն յօգով գործածուած է: Երբ յօգը պակսի՝ այս զանցնուածք երբակրանական կաննեաց հպատակելով է: Միակ լացատրութիւնն է Մարկոսի [Թ. 41] հետեւեալ բացատրութիւնը. օ՞ղի իրիւղո՛ւն է՛պի:

Սակայն շատ ցանցաւ կերպով աւետարանիչք զայն Յիսուսի կը պատշաճեցնեն։ Ս. Մարկոսի և Ս. Մատթէոսի մէջ՝ Տէրը հասարակօրէն նոյն ինքն Աստուած է, ինչպէս Հին Կտակարանին մէջ ալ, և «Տէր» անուանակոչումը յաճախ քաղաքավարական ձև մըն է, համազօր «Վարդապետ» կամ «Ռարբի» խօսքերուն։ Չարչարանաց մօտենալու միջոցները, նոյն Աւետարանիչք մասամբ կը շեղին իրենց վերապահ լինթացքէն [Մարկ. ԺԱ. 3, Մատթ. ԻԱ. 3, Դուկ. ԺԹ. 3, ևւն.]։ Ս. Դուկ կատ և մանաւանդ Ս. Յովնանէս աւելի կանուխ կ'սկսին [Յով. Դ. 1, 2, 23, ԺԱ. 2, Դուկ. է. 13, 19, Ժ. 1, 39, 41, ևւն.] բայց և այնպէս, երկուքն ալ շատ ետ մնացած են Ս. Պօղոսի վրայ, և այս յապտղուն ալ՝ ըստ մեզ, չի կրնար մեկնուիլ՝ եթէ ոչ պատմական ճշդութեան ծայրաստիճան հոգածութիւն մը ենթադրելով։ Ս. Պօղոսի համար, Հին Կտակարանի յառաջընթացներէն դուրս, Յիսուս Քրիստոս հասարակօրէն կոչուած է «Տէր»։ Հաւանական է որ Առաքելոյն խօսքը մէկ բացառութիւն մը անգամ չ'ենթադրեր։ Ամէն պարագայի մէջ «Տէր» բառը յատուկ անունը եղած է Քրիստոսի և իբր այս՝ կրնայ առանց յօդի գործածել [Հռ. ԺԴ. 6, Ա. Կոր. է. 22 ևւն.]։ Դեռ առեւին կայ, զի, Քրիստոս իւրացնելով Ենովայի անունը, կ'ընդունի նաեւ անոր բոլոր ստորագրելիները։ Պօղոս ինքզինք Քրիստոսի ծառայ կ'անուանէ, ինչպէս մարգարէք կ'ախորժէին Ենովայի ծառայ յորջորջել ինքզինքն [Երեմ. է. 35, Դան. Թ. 6 ևւն.]։ այն պարագայութիւններուն մէջ՝ ուր աստուածային գործոյ վրայ կը խօսուի, ինչպէս ստեղծագործութիւնը, Հնորայց սուշութիւնը, արարարութիւնը, զոտաստանը, վերջնական վարձատրութիւնը, այս պարագաներուն Աստուծոյ և Տիրոջ անունները ըստ զիպաց մըն միւսին տեղ կը դրուի՝ ինչպէս Կ'լլան հոմանիշ բառերը։ Վերջապէս, ինչ որ Աստուածաշունչ մատենը կը պատմէ Ենովայի վրայով, նոյնը Ս. Պօղոս կ'իմանայ առանց վարանելու՝ իր Վարդապետին վրայով։

Ենովայ «Իսրայէլի Վէմն» էր, և կամ սոսկ «Վէմբ»։ Հին Կատկարանի հեղինակները մեզ վարժած են այս ձև բացատրութեան։ Պօղոս կարծեա քնաւ տեղեկութիւն չունի անկէ, ինչ որ զինք չ'արդելուր հաստատելու թէ «Վէմբ նոյնինքն Քրիստոս էր» ի յախտենից, եւ Վեմնն էր ինքն Քրիստոս [Ա. Կոր. Ժ. 4.]։ Իսկ քիչ մը աւելի ոտարե կը յտելու. «Չփորձենք Տէրը [կամ զՔրիստոս], ինչպէս ոմանք փորձելին ու կորսուեցան օձերու խայթուածքէն» [Ա. Կոր. Ժ. 9.]։ Կ'ուզեն «Տէրը» ընթեռնուն, կ'ուզեն «զՔրիստոս», անկարելորդ է տարբերութիւնը, զի, Ս. Պօղոսը՝ համար երկու ձևերն ալ հոմանիշ են իրարու։ Յովէլ՝ Ենովայի մատին խօսելով ըսած էր. «Ո՛վ որ Տիրոջ անունը կանչէ՝ պիտի փրկուի» [Գ. 5.]։ Փրկութիւնը՝ որ տոնեօք կոպուած էր Ենովայի աւունը օգնութեան կանչելուն, այժմ ալ զՔրիստոս օգնութեան կանչի-

լուն կապուած է, և ասոր ապացոյց՝ Պօղոս կը շահագործէ մարգարէին խօսքը: Ասկէ տրամաբանօրէն կը հետեւի՝ թէ յաջո Առաքելոյն, Քրիստոս մէկ է Եհովայի հետ: Առանց որոյ, ինչպէս կարելի է մեկնել Եփեսոսի երէցներու ուղղած խօսքը, «Հսկեցէք ինքզինքնուզ ու բոլոր այդ հօտին վրայ՝ որոնց տեսուչ կարգած է ձեզ Ս. Հոգին, որպէս զի հովուէք Աստուծոյ Եկեղեցին՝ զոր ինք իր իսկ արիւնովը ստացած է» [Գործ. Ի, 28]: Այս պարբերութիւնը կանուխէն գայթակղեցուցած ըլլալով վեհերոտ աստուածաբանները՝ ասոնք ջանացին տարբեր սրբագրութիւններով ներկայացնել զայն, որոնցմէ մըն կ'ուզէր «Աստուած» բացատրութեան տեղ «Տէր» բառը դնել, ինչ որ յաջողեցաւ վերջապէս մուտ գտնել յոյն ձեռագիրներէ շատերուն մէջ: Արդի քննադատք ալ ամենէն արտառոց ենթադրութիւններու կը դիմեն՝ որպէս զի Պօղոսի ըսել չտան թէ «Աստուած իր իսկ արիւնով ստացած է Եկեղեցին»: Բայց Առաքեալը բնա՛ւ պէտք չունի իրենց օգնութեան: Իր լեզուէն՝ հոս, այնքան տարօրինակ չէ ինչպէս չատ մը ուրիշ անցքերու մէջ, Ան՝ իր սովորութեան համաձայն, կը բաւականանայ Աստուծոյ հետ նոյնացնելու զՅիսուս Քրիստոս, և անոր կը պատշաճեցնէ այնպիսի ստորագրելի մը՝ որ ըստ մարդկային բնութեան միայն կը պատշաճի անոր:

Տեղի կա՞յ ուրեմն զարմանալու ասկէ վերջ, այն արժէքի մասին՝ զոր Պօղոս կու տայ «Քրիստոսն է Տէր» բանաձեւին: Ինք այդ բանաձեւը իբր առանցք մը կ'ընէ ուղղափառութեան և որոշիչ նշանը [critérium] շնորհաց. «Ոչ ոք խօսելով Աստուծոյ Հոգւով կ'ըսէ. նշովեա՛լ [ըլլայ] Յիսուս. և ոչ ոք կրնայ ըսել, Յիսուս [է] Տէր, եթէ ոչ Սուրբ Հոգւով» [Ա. Կոր. ԺԲ, 3]: Ինք նոյնը կը նկատէ իբր է՛ն հակիրճ հաւմառութիւնը իր Աւետարանին. «Ոչ թէ մենք զմեզ կը քարոզենք, այլ Քրիստոս Յիսուս Տէրը» [Կոր. Բ. Դ, 5]: Մանաւանդ թէ ինք զայն կը ներկայացնէ իբր դաւանութիւն քրիստոնեայ հաւատքին, որ կը բովանդակէ էական մասերը փրկութեան թէութեանց. «Եթէ բերանով խոստովանիս թէ Յիսուս է Տէր, ու սրտով հաւատաս թէ Աստուած յարուցած է զանի մեռեալներէն, պիտի փրկուիս. զի, Ս. Գիւրքը կ'ըսէ, ո՛վ որ հաւատայ անոր ամօթապարտ չպիտի մնայ» [Հռ. Ժ, 9]: Եսայի նոյնը կ'ըսէ Աստուծոյ համար, ոչ թէ Քրիստոսի, բայց Պօղոսի համար նոյն բանն է, ու պէտք չէ տալստուկ զգալ կրկնելէ, քանի որ իր Քրիստոսը Տէր է և Աստուած:

(Շարունակելի)

ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

ՊԻՈՍԻ Ժ.Ի

ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿՆ ԱՌ ԱՄԵՆԱՊ. ՀՈԳԵԻՈՐ ՏԷՐ

(Շարունակութիւն)

11. Այսքան մանրակրկիտ նախաբանէն վերջը Ս. Քահանայապետն՝ իբր Գլուխ և Հովուապետ Ս. Եկեղեցւոյ, մի ըստ միովէ կուտայ իր ՎՃԻՌՆԵՐԸ՝ Անբաղձիկի դատաւորի մը վճիռներն են անոնք, բնականաբար անոնց համար սրունք կը հաւատան անոր առաքելութեան և իշխանութեանը աստուածային տուչութեան և թէ նա ունի իրաւասութիւն կատարեալ ընդհանուր Եկեղեցւոյ վրայ այնչափ՝ որչափ իւրաքանչիւր վիճակի և իւրաքանչիւր անհատի վրայ առանձնակի, և թէ՛ ի՛նչ որ նա կը վճռէ, նոյնը կը հաստատէ Քրիստոս Տէրն՝ իր Թագաւորութեան մէջ. որ ըսաւ. «ինչ որ պիտի կապես երկրի վրայ, կապուած պիտի ըլլայ երկինքի մէջ»։ Տրուած վճիռներն այսու կարգաւ են.

Ա. Ս. Քահանայապետն խոսիւ կը դատաւարէ այն ամէն բաները որոնք դործուած են՝ այս խռովեալ ժամանակի մէջ՝ 1. Առաջնական Աքոռոյ հրամաններուն դեմ. որոնք կը գտնուին աւանդուած քահանայապետական Կոնդակներու և Հրամանագրոց հաւաքածոյին մէջ. որ կը պարունակեն ի սկզբանէ մինչև ցայսօր Քրիստոսի Փոխանորդաց տուած և վճռած օրէնքներն՝ եկեղեցական բարեկարգութեան ու բարոյից մասին, բոլոր այն կանոններն որոնցմով կը կառավարի Եկեղեցին, անկախ աշխարհային ո՛ր և է իշխանութեան միջամտութենէ, ստրկութենէ, ազատ ամենեւին՝ ազատութեամբն Քրիստոսի, որով Առաքեալը կ'ըսէր անվեհեր. «Ո՛չ ումեք ծառայեցաք». «Եթէ մարդկան հաճոյ չկեի ապա Քրիստոսի ծառայ ոչ եի»։ 2. Կը դատաւարուէ այն ամէն բաները որոնք դործուած են՝ Սրբազան կանոնաց վճիռներուն դեմ. այն կանոններուն որոնք կը բովանդակուին կանոնական իրաւունք ըսուած Մատեաններուն մէջ. զոր կը կազմեն առաքելական կանոններն, Եկեղեցւոյ Ընդհանուր Ժողովներուն, Արքոց Հարց և Քահանայապետաց հաստատած կանոններուն և վճիռներուն հաւաքածոն. որով կը սահմանուին և կը հաստատուին իւրաքանչիւրին պարտքն ու իրաւունքը, իրաց, անձանց, դատաստանաց և խորհրդոց նկատմամբ. յորում կը սահմանուի նաև որոշակի՝ ամէն պատկանեալ պատիժներն մէն մի յանցանքի համար։ Որմէ կը հետեւի թէ Եկեղեցւոյ մէջ, որ ամենակատարեալ ընկերութիւն մըն է, ո՛վ որ իր պարտքը չճանչնար, կամ կը զանցանէ, կամ կ'արհամարհէ, և ո՛վ որ ուրիշին իրաւունքը կ'ստնակոխէ, կ'իւրացնէ, և ո՛վ որ այդ

հաստատուած կանոնները կ'անարգէ և առ ոչինչ կը զրէ՛, որով և այս
աստուածակարգ ընկերութեան խաղաղութիւնն ու վարչութիւնը կը
խանգարէ, կը դատապարտուի՝ — 3. իբր յանդգնարար գործող, և ըստ
հետեւորդի արժանի է պատժոյ։ Աշխարհային ընկերութիւնները անողոք
կը պատժեն իրենց կանոններուն զանցառու յանցապարսները, միեւնոյն
իշխանութիւնը, աւելի կատարեալ կերպով և հոգեւորական սահմանի
մէջ, ստաւած է Եկեղեցին ի Քրիստոսէ։ Եթէ այն Եկեղեցիք, որոնք
զիրենք անկախ հռչակած են Քրիստոսի Եկեղեցիէն, նովին գործով
տկարացած են այս իշխանութեան մէջ և թոյլ կու տան մեղկութեամբ
որ թշնամին կամ ըմբոստները կարենան իրեն շրջափակին մէջ աւերներ
գործել անպատիժ, սակայն Քրիստոսի ճշմարիտ միակ Եկեղեցին չկրնար
հանդուրժել, և ահեղ ոյժերու իսկ առջև չկրի սարկարար, այլ անվե-
հեր կը կանգնի՝ Դատաւոր անաչառ՝ յանուն Բարձրեւոյն խոսիւրդաւ-
պարտելով յանցանքն անխտիր։ Թագակիր գլուխներ, մեծամեծ գլուխնե-
ր և երեւելի իշխաններ ենթարկուեցան այս պատիժներու։ — Ահա
ուրեմն այս իշխանութիւնն է գոր ի գործ կը դնէ Ս. Քահանայապետը
նաև Կաթողիկէ Հայոցոյ մէջ գործուած այս ապօրինութեանց նկատմամբ։

Բ. Ս. Քահանայապետը, ՈՉԻՆՉ ԵՒ ՉԵՂԵԱԼ ԿԸ ՎՃՌԷ ԻՆՉ ՈՐ
Եկեղեցոյ իրաւանց դէմ որոշած են ըմբոստները։ Ո՛չ ոք իրաւունք ունի
Եկեղեցոյ իրաւանց դէմ որոշողութիւն մը տալու։ Եթէ տալու ալ յան-
դգնի, Եկեղեցոյ Գլուխը, իբր Գերագոյն Դատաւոր, կը բեկանէ
դայն, և կը հրատարակէ իբրև չեղեալ։ Այս իշխանութիւնը կը վայելէ
մարմնաւոր կողովարութիւնը, ո՛րչափ եւս առաւել հոգեւորը որ ո՛չ
ի մարդկանէ և ո՛չ անցաւոր բաներու համար, այլ ի Քրիստոսէ Աստու-
ծոյ հաստատուած է՝ հոգւոյ յաւիտենական փրկութեան համար։ Եւ
ի՛նչ են այդ որոշողութիւնները՝ ընդդէմ իրաւանց Եկեղեցոյ։ ... Ցարդ
բողոքներէն յայտնի կ'երևի. սակայն բնաւ անօգուտ չէ անցողորար
մի քանին դարձեալ յիշել։ Գլխաւոր և բազմաթիւ կէտերը կը բովան-
դակուին իրենց յօրինած, նոյն իսկ երկրորդ, երրորդ ընթերցումով
սրբազրած կանոնադրի նոր ծրագրին մէջ, լի որոշողութիւններով ընդ-
դէմ իրաւանց Եկեղեցոյ. ասոնց համար ապօրինաւոր ժողովներու մէջ,
վիճաբանութիւններ կատարեցին՝ իբրև օրհնելի մարմին, քուէարկեցին
և իբրև օրհնէ լնդունեցան, հակառակ օրինաւոր Պետին արգելքին։ Հա-
կառակ Ս. Աթոռոյ իսկ զեկացին և արգելքին։ Այս միայն յաւական է՝
Եկեղեցոյ իրաւանց դէմ որոշողութիւններ տուող ըմբոստ մարմին մը դա-
տապարտելու։ Այլ ապա ուրիշ շատ որոշողութիւններ կան. Հոգեւո-
կան Կոնդակի մը պաշտօնական դատապարտութիւնը՝ աշխարհական
մարմնոյ մը կողմանէ. — անոր դէմ Յայտարարութիւն գրել, ապել,
ստորագրել, ցրուել, մէն մին՝ գործ առա՛ծին։ ապստամբութեան. — Սի-
ոդոսը առ ոչինչ զրել, անոր լիակատար իշխանութեամբ գրած թ ուղ-

թերն իսկ արհամարհելով. — Առաջնորդին անուան յիշատակութիւնն արգելուլ ի Պատարագի. — Աշխարհային Կառավարութեան գիմել հոգեւոր Պետին դէմ, յընչաց քերելով Ս. Քահանայապետը. — Ս. Աթոռոյ գիտութեամբ, հաւանութեամբ և գործակցութեամբ միացած երկու իշխանութիւններուն մէկէն պաշտօնանկ ընել տալ, առանց Սինոդոսի, առանց եկեղեցականութեան. — իր բնակարանէն վտարել — Եկեղեցւոյ ստացուածներու գրաւումին ժպրհիլ, թիրթիրու մէջ հրատարակելով և անոնց չափազանցութիւններն քննա չհերքելով. — առանց կրօնականութեան ազգին վարչութիւնը ձեռք առնուլ, անխղճօրէ՛ն քայքայելով Հասարակութեանս հիմը, էական ու կենսական առանձնաշնորհումները, գոր և ո՛չ իսկ ուրիշ քրիստոնեայ ազգեր կը վայելէին. — Քահանայապետէն կարգուած և հաստատուած և օծուած Եպիսկոպոսները խայտոտակելու համար աշխարհական կառավարութեան գիմել և հրամանագիրներ ձեռք բերել... եւն. եւն. եւն. Ճշմարիտ կաթողիկեայն պէտք է ապաշաւէ և լայ այսքան անանուն և աննախընթաց անիրաւութեանց հանդէպ, որոնք պէտք չէին գործուիլ, չէին կրնար գործուիլ՝ առանց անօրինելու ընդդէմ խեղճ Հասարակութեան. եթէ իրենց պատրուակ բռնել ուզած պատճառը նոյն իսկ տասնապատիկ աւելի եղած ըլլար: Սակայն գիտեմ որ ոմանք պիտի ծաղրաբանեն, այս գործերու ծանրութեան, նոյն իսկ կարելի է՝ նշանակութեան վրայ. այլ այսպիսիները կրօնի չունին... հապա ի՞նչ գործ ունին մեր մէջ: Վա՛յ Հասարակութեան, որ այս խռովեալ ժամանակի մէջ այսպիսեաց ձեռքը մնայ, — ո՞րչափ ատեն, ո՞վ դիտէ Աստուծոյ դատաստանը. — և վա՛յ անոնց որոնք ճշմարիտ կաթողիկեայ կը խոստովանին զիրենք, և դեռ չեն բաժնուիր այսպիսիներու ընկերակցութենէն... «Որ զեմդուիս քանի, եւ զուշս կրանի»:

Գ. Ս. Քահանայապետին երրորդ վճիռը հրատարակութիւն մըն է՝ Վարչական ըսուած ժողովին որպիսութիւնը սահմանող. այդ ժողովը 1. ապօրինաւոր է, այս է՝ օրէնքի հակառակ. ո՞ր օրէնքի. — Ա) եկեղեցական օրէնքի, որ բնաւ թոյլ չտար որ յարհամարհանու եկեղեցական իշխանութեան, վտարելով զայն իր կազմակերպելու և նախագահելու իրաւունքէն, սոսկ աշխարհականք, բռնութեան վրայ յենլով, վարիչ մարմին մ'ըլլան ինքիշխան. — Բ) հետեւաբար նաեւ Ս. Աթոռոյ իրաւանց ալ հակառակ է այդ՝ որ պաշտպան է այդ օրէնքի. և որոյ հաւանութեամբ միջամտութեամբ և գործակցութեամբ մեր Պատրիարքներուն տրուած է նաեւ այդ աշխարհային իշխանութիւնը. — Գ) հակառակ է Հասարակութեանս օրէնքին, որ բնաւ չճանչցաւ երբեք և չկրնար ճանչնալ այսպիսի բռնաբարութիւն (usurpation) մը, այնպիսի ինքաւնաց անկանոն մարմին մը. ո՛չ սովորութեան մէջ կայ այդ, ո՛չ ու է կանոնագրի, և ո՛չ ու է յիշատակի մէջ նախընթաց մը ունի. — բացա՛մ-

ձակապէս ապօրինաւոր:— Դ) հակառակ է նաեւ Օսմանեան Կառավարութեան օրինացը որ կը ճանչնայ միայն Կրօնական Հաստատութիւն Փէրմաններուն դէմ է, որ միայն Հոգեւոր Պետին կը յանձնեն վարչութիւնը, Ժողովները, անոր պատասխանատուութեան ներքեւ:— 2. Այդ Ժողովը հերձուածողական է, այսինքն բաժնուած, անջատուած եկեղեցական իշխանութիւնէն, զանի չճանչցող, անոր իշխանութիւնը ոսնակիւք ընող, յափշտակող, զայն վտարող, անկէ անկախութիւն հրատարակող, անկախաբար գործող, փոխանակ անոր՝ վարչութիւն (administration) մը հաստատող. ահա հերձուածն այս է, որ, ինչպէս վերեւ բաւեցաւ, համազօր է դիմելու նոյն իսկ բաժանումի ի Հոսովմէական Եկեղեցւոյ: Ս. Քահանայապետին այսչափ յայտնի ու բացարձակ սրտողութիւնէն յետոյ, շատ զարմանալի է ըմբոսաներէ ոմանց պնդել հաստատելի թէ մենք ճշմարտապէս Կաթողիկոսայք ենք. ըսել կ'ուզեն թէ մենք, ի հեճուկս իսկ Քրիստոսի Փոխանորդին, պիտի մնանք մեր յամառութեան մէջ, և չենք ընդունիր անոր դատաւորութիւնը, և որչափ որ նա զմեզ հերձուածող անուանէ, շատ կը սխալի, մենք չենք հերձուածող՝ այլ Կաթողիկոսայք:— Արդեօք երբ Քրիստոս ա'լ «Տէր, Տէր քաց մեզ» բառերուն պիտի գոռայ՝ «ի քաց կացե՛ք յիւրիւր. ո՛վ անիրաւութիւն մշտնէր, ճշմարտիս կ'ըսեմ, չեմ ճանչնար զմեզ», արդեօք ասո՞նք ալ պիտի կարենան յաւակնիլ և՞ ըսել, «ո՛չ. կը սխալիս դու. մենք պիտի մնանք ներս»: Ի՞նչ բան կը նշանակէ այս յամառութիւնը... — անապաշխար ոգի: Այսպիսիներուն ճիշդ կուգայ երջանկայիշատակ Պիոս Թ. Քահանայապետին նշանաւոր խօսքը. «Դիտաւր խաբէութիւնը որ ընդ ՀԵՐՁՈՒՍԹԸ պատրաստեալ կը գործածուի. ԿԱԹՈՂԻԿԵԱՅ անունն է, զոր նոյն հերձուածոյն զսիցներն ու հետեւողները՝ քեզ մեր խիստնութեամբ և մեր դաստիարակութեամբ ըրջան, կը յանդիման գործածել... պիտի է որ Քահանայապետին դաստիարակութեամբ որոշուի քե որո՞նք Կաթողիկոսայք են և որո՞նք չեն» (Quart. 4, 6, 15):

Դ. Ս. Քահանայապետին վերջին վճիռը ամենէն ծանրն է և ամենէն ցաւալին: Ասոր համար է որ աւելի մեծ կարեւորութիւն տալով «Կաթողիկոսայք» կը յայտարարէ զայն: Այս վճիռը կը բովանդակէ պատիժ մը, որ Ս. Եկեղեցւոյ մէջ ամենէն ահաւորն է, և ճշմարիտ հաւատացեալի մը համար սոսկալի նշանակութիւն ունենալով, լաւագոյն է աշխարհիս ամէն տեսակ նեղութիւն ու կոտորածը քաշել քան թէ այս պատիժն ենթակուիլ: Այս պատիժը հօր մը նզովքն է, Քրիստոսի Տեառն մերոյ անէծքն է, որդւոյն Աստուծոյ ՎԱՅՆ է, Հօր Աստուծոյ ուռը կարելն է, Հօգւոյ Սրբոյ տրամբն է: Այս պատիժը Պետրոս Առաքելոյն գոռալն է. «Ընդի՛ր եղից աստուայ գսի՛րս քո սեղ Հոգւոյն Սրբոյ», եւ. «Զի՞ է գի միաբանեցիք յոյ՛ք փորձել զՀոգին Տեառն» (Գործ է) ևւ. «Մանկունք անիծից, քողեալ գողողորդ ճակատաբան» (Բ. Պետր.

Բ.) : Այս պատիժը Պօղոս Առաքելոյն վճռելն է՝ «Զորս մասնեցի սասանայի, զի խաւեսցին (Ա. Տիմ. Ա. 20) եւ՝ «Խորշեցիր 'ի անցանկ... որպէս Յանեսն եւ Յամրես հախառակ կացին Մովսիսի, նոյնպէս եւ սոքա հակառակ կան ճշմարտութեան» (Բ. Տիմ. Գ. 6. 8.) : եւ՝ «Աղեքսանդրոս բազում ջարչարանս եցոյց ինձ. հասուցե հմա Տէր ըստ գործս նորա. յորմէ եւ զու անձնապահ լինիցի՛ր, զի շատ հախառակ եկաց բանից մերոց» (Անդ. 14, 15) եւ՝ «Աղայեմ զձեզ, եղբա՛րք, դիտե՛ք զայնպիսիսն՝ որ հերձուածն եւ գայրակողոթիւնս առնիցեն արտաքոյ վարդապետութեանն, զոր դուք ուսարուք, եւ խորշեցարու՛նք 'ի անցանկ... Զի ձեր հնազանդութիւնդ առ անկեանեան հասեալ է» (Հռ. ԺԶ. 17, 19) : եւ՝ «Յանկէ հերձուածողէ՛ յէտ միանգամ եւ երկիցս խրատեցոյ, հրաժարեցի՛ր, զհետաքիր զի թիւեալ է այնպիսին եւ մեղանցի անձա՛րք զանձն դասապարտեալ (Տիմ. Գ. 10. 11) :

Եկեղեցւոյ առաջին դարերուն մէջ այս պատիժը մահուան համահաւասար էր, կարապետ ամէն տեսակ աղէտներու, իսկ հիմա, երբ հաւատաքը կ'արձամարտուի, այս պատիժը իբր միջինդարեան փոած զէնք մը կ'ուզուի ցոյց տալ... Փարիսեցիներն ալ կարեւորութիւն չէին տուած Գրիստոսի անէծքներուն — բայց ասոր համար չկասեցաւ Երուսաղէմի աղէտալի կործանումը : Հալածողներն ալ քամահրեցին Եկեղեցւոյ իշխանութիւնը — բայց ասոր համար յետո չհանձնեց անոնց կորուստը : Հերետիկոսներն ալ յնչւոյ քերեցին բանադրանքը — բայց ասոր համար չմարեցաւ դժոխքը : Մենք կը խօսինք ճշմարիտ հաւատացեալներուն վրայ. և ասոնց համար զարհուրելի է այդ պատիժը : Եւ ահա Ս. Հովնուպետը հանդիսապէս կը յայտարարէ թէ Վարչական լուծած ժողովոյ անդամները, և եկեղեցական իշխանութեան ղէմ ամէն ապստամբները բանադրանաց պատժոյն ներքեւ ինկած են : —


12. Բանադրանքը եկեղեցական դատակնիքներու ամենէն մեծն է, և է պատիժ մը զոր եկեղեցական օրինաւոր իշխանութիւնը կուտայ օրէնքի ղէմ գործուած յանցանաց համար : Այս պատժոյս վախճանն է խանգարեալ կաշգը վերահաստատել, յանցաւորը զգատապնել, դամէնքը յանցանք գործելէ իսպառնել և գալթակղութիւնը վերցնել : Յայտարարական վճիռը ուղղակի ցոյց կուտայ յանցանքը, որ գործուած ըլլալով արժանի եղած է պատժոյ : որով Դատաւորը՝ կատարելապէս գիտակից է օրէնքի ղէմ գործուած յանցանքին և անոր հանգամանաց վրայ. և գիտակցաբար կը վճռէ թէ այս ինչ կամ այն ինչ յանցանքով արդէն ստացուած է բանադրանքը, զոր և իր յայտարարութեամբ իսկ կը հաստատէ : Դատակնիքը սակայն բուժողական պատիժ մըն է — «Կրչատրե՛ զանոնք խստաղոյն, որպէս զի ԱՌՈՂՁԱՆԱՆ 'ի հաւատս» (Տիմ. Ա. 3) : Այս պատիժը յանցապարտ և յամառեալ քրիստոնեաներու կը տրուուի, որով կը զրկուին ինչ ինչ հոգեւոր բարիքներէ : Ուստի Ս.) պատժուողը պէտք է հպատակն ըլլայ Դատաւորին. հետեւաբար դատակնիքով

չեն պատժուիր անհաւատք, Իրեայք, անկրօններ, Ֆարմասօններ, ևւն : — Բ) երբ պատժուածն ի զգաստութիւն գայ, դադարելով յամառութիւնը, կը վերցուի դատակնիքը՝ վերապահողէն, իսկ եթէ վերապահութիւն չկայ, ինչպէս ներկայ բանադրանքը վերապահեալ չէ, ան ասին ու է խոստովանահայր կարող է արձակելու, միայն թէ բանադրեալը ճշմարտապէս զղջայ և բոլորովին ետ կենայ այն յանցանքներէն : — Գ) Բանադրեալներն, որ իրեւ մարդ քրիստոնեայ կը զրկուին հաւատացելոց հաղորդակցութենէն, երկու տեսակ են. խորշկիֆ (vitandi) և հանդուրժելիֆ (tollerati) : Խորշկեկայ հետ հաւատացեալները ո՛ր է է հաղորդակցութիւն չեն կրնար ունենալ : Բայց ներկայ բանադրանքով պատժուածները, հանդուրժելի են միայն : Դ) Ուստի այս ներկայ բանադրանքը՝ աշխարհականաց մասին, կը զրկէ 1. յրեղունեղութենէ խորհրդոց, որով չկրնար այդ բանադրելոց մատակարարուիլ ո՛ր է է խորհուրդ, մինչև որ բանադրանքէ չարձակուին : — 2. Սկզբամբ կը զրկէ ի գործածութենէ Աստուծային պաշտամանց, ինչպէս են՝ պատարադ, հրապարակական աղօթք, թափօր, ժամերգութիւն, հանդիսաւոր օրհնութիւնք : — 3. Կը զրկէ Եկեղեցոյ հրապարակական հոգեւոր օժանդակութիւններէն (suffrages) որոնք կը կատարուին յանուն Եկեղեցոյ՝ անոր պաշտօնականներէն, ինչպէս են՝ այն արգիւնք և պտուղները որ յառաջ կու գան հաւատացեալներուն՝ Ս. Պատարագի զօնէն, ժամերգութենէն, հասարակաց աղօթքներէն և ներողութիւններէն : — 4. Կը զրկէ Եկեղեցական քաղութեան, որով եթէ բանադրեալն մեռնի՝ առանց ապաշխարութեան կամ զղջումի նշան մը տալու, չկրնար սուրբ տեղոյ մէջ թաղուիլ, և եթէ թաղուած է, պէտք է հանուի : — Իսկ բանադրանքի տնօրէնակի հետեւութիւնն է կապած հետեւիլոսութեան : Ով որ տարի մը բանադրանքի մէջ կը մնայ յամառարար, կ'իյնայ հերետիկոսութեան կառկածանքի մէջ, որովհետև կ'ենթադրուի թէ Եկեղեցոյ իշխանութիւնը և Ս. Խորհուրդները, որոնց գործածութիւնը կը թողու, կ'արհամարհէ ու կ'անարգէ : — Բանադրեալի հետ յԱստուծային հաղորդակցիլը՝ մահացու մեղք է : Նոյնպէս մահացու է բանադրեալի հետ հաղորդակցիլ ղճրական ղճիւրի մեղ (in crimine criminoso) : այսինքն երբ մէկը հաղորդակցի այն յանցանքի մէջ որուն համար նա բանադրուեցաւ, և օգնութիւն կամ նպաստ մատուցանէ անոր :

13. Կրնայ ուրիմն ենթադրուիլ հաւատացեալ մը, անկեղծ և երկիւղած, որ այս բաներս գիտնալով, չարունակէ մնալ այն գործերու, ժողովներու և բնկեցակցութեան մէջ, որոյ համար բանադրուեցաւ. կրնայ անտարբեր կերպով չարունակել հետեւելու Ս. Քահանայապետին և Քրիստոսի, երբ կը լսէ անոր ահաւոր սպառնալիքը, «Ահա՛ քողեա՛ղ շիցի ձեզ տունդ ձեր տներակ» ...

(Շարունակելի)

ՆՈՒԱԳ



ՅԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ԿՈՒՍԻՆ

*« Il lui est bien plus glorieux de justifier une seule
« âme que d'avoir créé ce vaste univers dans toute la
« perfection naturelle qu'il a. »*


Parole de la Ste Vierge à la Vble Marie d'Agréda

Ո՛ր եւեթ ակնարկելով՝ դեռ եւ չարիս դու վաճես,
Երբոս փութով ասուածակիր առ Մկրտիչն Յովնաննէս.
Ի շրթանց բոց հնդուն շքնորհի, թեզերաց պերհ զբոխայ,
Չուարթուն համայն կսն ի յակնիռս բսփանչացեալ ի սեռ Ին:

Կուսիլոյ վրտեմ արգանդն այսօր եղեւ երկինք նորակերտ,
Առ սահարիլ երկրպագէ մայրն ամուլ սիրով սերտ.
Մանուկն անդէն ի շունչ բոյին սրբի՝ մեղաց եւ զրնծայ,
Ըզբեղ յայտնէ Սրիթարիչն հէ՛ք մահացուաց վեհ ընծայ:

Ո՛չ ընդունայն եղեւ երբեք կարդալ զանունդ յօգնութիւն,
Այցելութիւնք Ին սրբաւունչ եղեն հանուրց փրկութիւն.
Քեւ ո՛չ բրնաւ պարեգէ՛ք նոզւոց մերոց լիցին ուստիանց:

Յիշեա՛, ո՛վ Մայր, զի Քե՛զ վասն իմ աւանդեցաւ երկնից զանն.
Եւ ո՛րչափ զիս տեսնիցես ողորմելի եւ աղէս՝
Այնչափ յաւե՛լ ինն իրաւունս ողորմութեան ԲՈՒՄ առաս:
յ 2 Յուլիսի (Ն. Տ.) 1912 Ո. Կ. Մ.



ԱՅԼԵՒԱՅԼՔ

Բարբուկայի հանրապետական իշխանութիւնը նոր օրինադիմ ձեւ
պատարաստեց նկատմամբ Անկախի գաղթավայրը շէնցնելու. Ռուսիոյ հրք.
եռաներու բնակչութեան գաղութով: Այս օրինադիմն հեղինակն է Պ.
Թարլոյ, Սպանիացի հրեայն: Եր շատ ճամբորդած է ի Ռուսիա եւ ի Պա-
ղեստին. բնական է նաեւ ժամանակ մ'ի Կ. Պոլիս, ուր լաջողած է սի-
րաշահիլ երիտասարդ—Թրքերը: Հինգ տարիէ ի վեր կը գտնուէր ի Լիզ-
պոնա, ուր Կ. Պոլսոյ ազանդաւորաց միջնորդութեան չնորհիւ յաջողե-
ցաւ սարդիլ մանիլ երկրագործական նախարարութեան կարեւոր մի պաշ-
տօնին մէջ: Անա այսպէսով կրցաւ ձեռք ձգել թոյլտուութիւն իւր կրօ-
նականներուն համար՝ Ափրիկէի Բորթուկէզ ամենաչքնաղ գաղթավայրե-

բուն մէջ բնակութիւն հաստ առնելով տիրանալու։ Այս դէպքը արա-
րական է . և ցոյց կուտայ հրէից ճարտարութիւնը, որով՝ առանց և ոչ
մի կաթիլ արիւն թափելու, ձեռներէց կ'ըլլան ընդարձակ երկիր մը գրա-
ւելու։ Պէտք է դիտել նաեւ թէ ազանդաւոր (ֆարմասօն) կառավարու-
թիւն մը նոյն իսկ ազգային շահերը կը զոհէ ազանդին ծառայելու հա-
մար։ Իսկ հրէայք ազանդաւորաց հետ միշտ ձեռք ձեռքի տուած կը
քալեն . իրենց ճարտարութիւնն ու տաղանդը կը զործածեն ի վնաս քրիս-
տոնէութեան, մանաւանդ Կաթողիկէ կրօնքի, զգալով անոր անդիմա-
դրելի ոյժն, և երգուընցած են մահացու պայքար անոր դէմ, ինչպէս կը
մղին ամենուրեք, ի Ֆրանսա, ուր պետական իշխանութիւնը ձեռք ան-
ցուցած են, յԱւստրիա, և այլուր . դրամի և իշխանութեան արապե-
տութեամբ, կը հալածեն կրօնքը որ իրենց անհանդուրժելի և սակելի է,
իւր մաքուր բարոյականին համար։

ՊԵՐԼԻՆԻ ԿԱԹՈՂԻԿԵՍՅՔ, Գերմանական Կայսրութեան Պէրլին
մայրաքաղաքը զոր սովորած են շատեր ամբողջովին բողոքական բնակ-
չութեան կեդրոն կարծել, կը բաժանուակէ 350000 է աւելի կաթողիկոս-
ներ որոնք բաժնուած են 40 ժողովրդապետութիւններու։ Ամէն օր Ս .
Պատարագ կը մատուցուի 74 մատուռներու մէջ։ Միայն Ս . Ետուիկի
ժողովրդապետութեան մէջ 30000 հաւատացեալներ կան, Ս . Սրաի վի-
ճակին մէջ 20000 եւն : Հսկայական եկեղեցի մը շինուելու վրայ, նուիր-
ուած Ամենասուրբ Հաղորդութեան։

ԲԻԻՏՍՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿԵՍՅՔ, Վերջերս ճառի
մը մէջ Վսեմ. Կարգ . Պէօրն, Արքեպիսկոպոս Ուէսթմինսթրի ցոյց
ստաւ թէ ինչպէս հաստատուն յառաջադաշտութեամբ կ'աւելնայ Անգ-
ղիոյ մէջ Կաթողիկէից թիւը, և է շատ աւելի նշանակելի քան որչափ
կը կարծուի առհասարակ։ Անվրճելի իրողութիւն մըն է որ այսօր երեք
անգամ աւելի եկեղեցիներ ու քահանաներ կան, քան վաթսուն տարի
առաջ, երբ դեռ առաջին անգամ հաստատուեցաւ Անգղիոյ մէջ Կաթո-
ղիկէ նուիրապետութիւնը։ Կարծես Կարդինալին խօսքերը հաստատու-
համար է որ Հ . Կրէհմ Կաթողիկէ Թայմզ թերթին մէջ հրատարակած
մէկ փայլուն յօդուածովը, զոր վերնագրած է «Ջարգացումն Կաթողի-
կէութեան», ի հաշիւ կ'առնու Բրիտանիան Պետութեան Կաթողիկէից
թիւը, որ այսօրուան օրս կը հասնի տասներեք միլիոնի, 1899էն ի վեր
446 անկլիքան հովիւներ, 205 ցամաքային և ծովային բարձրաստիճան
սպայք, 129 օրէնագէտներ, 60 բժշկք, 66 ազնուականք ընդգրկած են
Կաթողիկէութիւնը։ Ամէն տարի, միջին հաշուով, դարձի կուգան տաս
հազար անձինք . որ կը պատկանին անխտիր բարձր և ժողովրդային դա-
սակարգի։

ԱՆՋԵՆՈՒԷՐ ՁՈՀՈՂՈՒԹԻՒՆ : Թիթանիկի ծանօթ աղէտին զոհ
գացած են նաեւ երեք Կաթողիկէ քահանայք, որոնց մին, Հ . Յովսէփ

Բէրուշից, Պապիւրացի Բենեդիկտեան Կրօնաւոր, իր մեծաւորներէն կը ղրկուէր Ամերիկայի Միննէթոպա գաւառը, իրենց դպրոցին վերակա-
ցութիւն ընելու համար: Երբ մահուան մօտալուս վտանգը տեսաւ
սպառնալից, փութաց Ս. Պատարագը մատուցանելու, և ապա կիններն
ու աղաքը ազատելու օգնեց, մերժելով աշխատել ինքը զինքը փրկելու:
Կար հոն նաեւ անապարքիս բողոքական պատուելի մը, որ փութաց ա-
զատարար նաւակ մը ապաւինել և փրկուիլ, մինչդեռ Կաթողիկէ կրօ-
նաւորը անձնաւթացութիւնամբ ինքզինքը զոհեց ուրիշները փրկելու և
մեռաւ գոհանալով Աստուծոյ:



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Կղերականներու զինուորագրութեան մասին տեղի ունեցած վերին միջոցէպը տալիս
կուտայ որ Մէնմուա Թերթին ըստ իւր սովորութեան հրատարակած բացարձակ սուտերը
ի վեր հանենք, զոր պիտի չզիջանէինք ընել, ինչպէս յայտնի է, եթէ խնդրը շատ կեն-
սական ըլլալով, Թերթիմարութիւններու և կեղակործ դատողութիւններու անդիւր տալու
ընելով չունենար Սրբ իրաց ճշմարտութիւնը հետեւեալն է. Մեծ. Ոսկեան Գրիգոր էֆ.
եկու առ Արհի. Աւետիս Արք. Արքիարեան, և կղերականաց զինուորագրութեան վե-
րաբերել կառավարական պաշտօնաթուղթը ցոյց տուաւ. Նորին Արհի. տէրութիւնը կան-
չեց նաեւ զՏէր Գէորգ Գերապոյժաթ Թէրզիպաշեան և երկուքը ի միասին յայտարարեցին
յիշեալ Ոսկեան Գ. էֆ. թէ քանի որ Վարչական ըստած ժողովը Ս. Գահանայապետին
յայտարարած է իր հեռուածող և բանալիւն, « և է խնդրոյ նկատմամբ չէին կրը-
նար անոր հետ յարաբերութեան մէջ մտնել, սակայն խնդրոյն կարեւորութիւնը ի նկատի
առնելով, խոստացան բոլորովին անուղղակի եղանակաւ ճար մը խորհիլ, եւ կառավարական
թղթոյն բովանդակութեանը լաւ տեղեկանալու համար, զայն իրենց քով պահեցին: Սակայն
հետեւեալ օրը երբ տեսան որ Մէնմուա, — որոյ արտօնատէրը անգամակից է այն ժողովոյ, —
այս գէպը հրատարակած էր իրեւ թէ Արհի. Արքիարեան Արք. ժողովոյ կողմանէ
ղրկուած պատուիրակն ընդունեն և անոր խոստացեր է պատշաճը տնօրինել, — ցոյց տալ
ուզուելով որ ինքը ժողովին գոյութեան և գործելու իրաւունք ճանչցեր է, — այս անի-
րաւ ենթադրութիւնը փարատելու համար յիշեալ պաշտօնաթուղթը Գեր. Միւթէվէլեա-
նին միջոցաւ Մեծ. Ոսկեան Գրիգոր էֆ. վերադարձուցաւ, գանգաւ յայտնուելով եղած
գիտութեամբ և հնարածայ հրատարակութեան վրայ: Ահա ասոր վրայ է որ նոյն Մէն-
մուա բոլորովին ստոյգ նոր յօդուած մը կը հրատարակէ, կատարելապէս այլափոխելով
խնդրը, և իր կիւքը դոհացնելու և մտքերը պղտորելու գիտմամբ Ամեն. Հոգեւոր Տիրոջ
հասցէին նախատիւքներ տեղացնելով անխղճօրէն:

Արդ. 1. հիմնովին սուս են Մէնմուային այս գէպին մէջ Ամեն. Հոգեւոր Տիրոջ վե-
րագրած դերը, խօսքերը, գործերը. 2. Բոլորովին սուս են նոյնպէս Գեր. Միւթէվէլեանի
վերագրած խօսքերն, զոր իբր թէ զրուցած ըլլայ ան Ոսկեան Գրիգոր էֆ. յանուն Ամեն.
Հոգեւոր Տեառն. 3. Նմանապէս սուս են Արհի. Արքեպիսկոպոսին և Գեր. Թէրզիպաշեան
Գեր. վերագրուած վարմունքին և խօսքերուն ինչ ինչ պարագաները:

Այս պատիւ միջոցէպը ինքնին բաւական է ցոյց տալու մոլորեալ Մէնմուայի ճշ-
մարտախօսութեան և պարկեշտութեան ստախճանը:

Պէտք է տեսնենք նաեւ, յանդորութիւն մտոց ամենուն, թէ վերոյիշեալ զինուո-

դուրսը հաւաքուած բրակիր ֆետայիներ լաւ իրեցին ամէնէն յանդուգն եղողներուն: Արշարունի Պատրիարքին եղբայրը Նաշիտ էֆ. ևս մէկ շառաչայի ապստակ մը ընդունելով ազատեցաւ:

Մենք ցառով կ'արձանագրենք այն գէպերը: Անշուշտ կը յիշուի թէ, երբ մեր Հայ Կաթողիկէիցո մէջ ևս ամիսներ յառաջ նման անորակելի ապօրէն խռովութիւններ կը պատահէին՝ միշտ օրուան Դաշնակցական հերոսներու աջակցութեամբ, Իսմ-Գալուի պաշտօնական շրջանակներուն մէջ, պաշտօնական ծափահարութիւններ կ'ըլլային՝՝՝:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

Պատեազմական նախարար Մահմուտ Շէվքէթ փաշա իր հրաժարականը մասայց, իր հրաժարման շարժումիւ ներկայացնելով թէ ինք աւելի պաաշաճ կը դատէ որ ուրիշ մը դործադրութեան գնել տայ զօրականներու քաղաքականութեամբ չզրադելու համար իր ընդունել տուած օրինագիծը: Մահմուտ Շէվքէթ փաշա իր գործառնութիւնները խուրչիտ փաշայի փոխանցելէ ետք իր տունը քաշուեցաւ: Խուրչիտ փաշա իր նոր պաշտօնին ձեռնարկելէն ետք Մահմուտ Շէվքէթ փաշայի հրաժարականը ըստ սովորութեան հաղորդեց բոլոր զօրաբանակներուն:

* * Սպայակոյտի նախագահ Հոսի փաշա հրաժարած է և հանգստեան կոչուելու մտօք խնդրագիր տուած է:

* * Զրոյցի մը համաձայն արտաքին գործոց նախարար Աւրմ պէյ՝ հրաժարած է: Նոյնպէս, կ'ըսուի թէ Արիսթիաի փաշա մտադիր է հրաժարելու և ծովային նախարար Խուրչիտ փաշայի հրաժար. կանը մօտալուտ է: Իսկ վարչապետ Սոյիտ փաշա պիտի հրաժարի տաղանդական պատճառով: Այս պարագային, ինչպէս գրած էինք, հաւանաբար նոր դահլիճը կ'ազնելու պաշտօնը պիտի յանձնուի Հիւսէյին Հիլմի փաշայի:

* * Կանխահաւ ձկն. Էրզրումէ կը տեղեկացնեն թէ յորդառատ անձրեւ և շրջակայ լեռներու վրայ ալ ձիւն տեղացած է, որուն հետեւանքով կ'ազմուած հեղեղներէն ոչ-խտրներու հօտեր փճացած են: Չմեռուան եղանակ կը տիրէ այն կողմերը:

* * Միրախիճներուն զրգուլթիւնը կը գրէ Եէնի Ասրը օրէ օր կը շատնայ: Տակաւին յայտնի չէ թէ ինչ կ'ուզեն: Պիպ Տօտա փաշա որ մեծ յարգանք կը վայելէ Միրախիճներուն քով, կառավարութեան հանդէպ իր հաւատարմութիւնը կը յայտնէ: Բայց անոր հաւատարմութիւնը պէտք չէ փառահիշ կառավարութիւնը, կ'ըսէ Եէնի Ասրը, պէտք է ամէն պառտհակամտութեան առջեւ պատրաստ գտնուի. ո՛ր և է միջագէպի մը առաջը առնելու և որիւնահեղութենէ խոյս տալու համար: Յիշեալ թերթին տուած տեղեկութեանց համաձայն իստ Պօլսթին վերջին անգամ միթրայէօզ մը և թնթանթ մը ճարած է եղեր:

* * Սիլիսթի քուղը գալ տարիէն սկսելով պետական մենաշնորհի պիտի վերածուի: Երմտական նախարարութեան հասցիւթերու բաժնին տնօրէն Փայիզ պէյ այդ մասին ծրուագիր մը պատրաստած է:

* * Վարչապետը յաջորդաբար Պաղտատի նախորդ կուսակալ Նազըմ փաշայի, և Տրիպոլիի նախորդ հրամանատայ. Իպրահիմ փաշայի տաղանդեց պատերազմական նախաւարութեան պաշտօնը, բայց անոնք մերժեցին ընդունելու:

* * Վիեննայի մէջ շատ յոռի տպաւորութիւն գործած է այն լուրը թէ Անգլիական կառավարութիւնը Մըրրաւ գնդապետը Մակեդոնիա և Ալպանիա կը զրկէ, մասնաւոր պաշտօնով կը վախճուի թէ Պողոսեան Բօմիթէն նոր մեքենայութիւններ կը սարքէ:

* * Աքսաֆին գործոց նախարար Աւրմ պէյ և ծովային նախարար ու պատերազմական կան նախարարի փոխանորդ Խուրչիտ փաշա երէկ Վափոր երթալով, այցելեցին Անգլիոյ գեապանատան գործակատարին և յետոյ Նազըմ փաշայի ապարանքը երթալով խորհրդակցեցան:

* * Սայիս փաւայի Դանլիներ հրաժարեցաւ՝ հակառակ օր մը առաջ իսկ Երեսփ,

ժողովին մէջ փոփոխութեան քուէ ստանալուն Սոյիս փաշայի տեղ փոխապետ որոշուեցաւ Լւնտոնի Օտ. դեսպան թէվֆիգ փաշա որ մերժեց ընդունիլ:

* Փոս. Պալիկիի սեւակցութիւնը եւ թուրքիա. վիեննայէն լուր կը տրուի թէ տէրութեանց միջամտութեամբ, որոնց մէջ կը գտնուի նաեւ Գերմանիա, զինադադար պիտի կնքուի թուրքիոյ եւ իտալիոյ միջեւ ու այս միջամտութիւնը կը նկատուի հետեւանք Բոսնիայի տեսակցութեան Ձինադադարէն ետքը հաշտութիւն պիտի կնքուի:

* Բրիտանիայի մէջ ըմբոստական շարժման մը հետեւանք, կատարի զնդհարումն ներ տեղի ունեցած են, եւ մեծ կորուստներ պատճառած երկու կողմերուն ալ:

* Մեծ տէրութիւնը Լիբանոնի խնդրոյն կարգադրութեան համար կը պահանջեն ներքին կոնտրաբանութեան բարեփոխումը, եւ իսկ նաեւ հանգիստը Լիբանոնի տրուելը: Բ. Դուռը հակամէտ չէ այս առաջարկն ընդունելու, կ'ըսէ Ֆրանսիոյ Զայրուելի գի Ֆրանսական խող մը կը նշմարէ այս առաջարկին մէջ:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Բ Ե Բ

Միլիսնէն կը գրեն թէ Բոսնիայի տեսակցութեան զնդհարումը մը գումարումը պիտի ըլլայ Այդ դեսպանաժողովին մէջ պիտի վիճարանալին թուրքիոյ խնդիրները, որուն տմբողջութիւնը ամէն կողմէն սպառնալիքի տակ է:

* Բարիզէն կը հեռագրուի թէ իտալական կառավարութիւնը մտադիր է եզէսկանի մէջ տաններկա կողմերուն համար փոխալին ինքնօրէն աշխարհ կազմակերպութիւն մը տալ, որոնց իւրաքանչիւրը մէկ տէրութեան մը պաշտպանութեան տակ մտնեն: Իտալիա իրեն կը վերապահէ Հոսդուր եւ Ասթիւրիան:

* Սերվիլն եւ Լորա Բիչնէրի գէտ եղած դատադրութեան մասին Լւնտոնի պաշտօնական շրջանակներուն մէջ ամենախիստ վերապահութիւն եւ գաղաւթապահութիւն ցոյց կը տրուի: Այսու հանգեք չաւրացուի որ խնդիրը շատ ծանր հանգամանք ունի:

* Եզիպոսի տեղ. Բոսնիայի լորա Բիչնէր յանկարծ Լոնտոն մեկնեցաւ Լորաին այս անակնկալ ուղեւորութիւնը զարմանք պատճառած է Գահիրէի գիւնադատական շրջանակներուն մէջ:

* Ֆրանսայի մէջ նաւատորմներու գործադուլին հետեւանքով Մարսիլայէն Սեւ ծով երթեալի ունեցող Ֆրանսական Ռաքէ եւ Մէսսաթըրի ընկերութեանց շոգենաւերու կառնաւոր երթեալը դժուարացած է: Ֆրէսինէ եւ Բաքէ ընդունած են գործաւորներու պառհանջները, իսկ Մէսսաթըրի մերժած է: Իսկ շարժում Մէսսաթըրիի Սակալիէն շոգենաւէն դատ մինչեւ մէկ ամիս Մարսիլա ուղեւորող շոգենաւ չկայ:

* Անգլիական կառավարութիւնը մտադիր է Աղեքսանդրիոյ նաւահանգիստը պառտերապրական նաւահանգիստի վերածել:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն


Ս. Պողոս եւ Քրիստոս	369
Ս. Քահանայապետին նամակը	373
Նուագ յԱյցելութիւն Կուսին	379
Աղեւայլ	379
Տեղեկագրական	381

ԱՐՏՈՆԱՏԷՐ
ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՐԵՆ-ԽՈՐԱԳՐԱՊԵՏ
ԳԵՈՐԳ. Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԵՏԱՆ

Տպագր. Օտմանե սն Գործակցական Ընկ. Էպուսուուս նասէսի Նո. 27



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան
սլացօնական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը
սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ
նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին
մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյոյց ամէն յուրերն՝ համառօ-
տաժ. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց
մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբեր կարդալու :

ԻԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար	
Տարեկան	Դնէկ . սորձ. 40
Վեցամսեայ	» » 20
Արտասահման	
Տարեկան	Ֆրանկ 10
Վեցամսեայ	» 5
Բաժանորդագրութիւն կանխիկ կը վճարուին Մանսա-Բոսով եւ կամ մէկ մէկ դրոցոց նամակադրութով :	

Մէկ թիւ 1 Դանեկան



Նամակ . յղուած . եւն. կը ղրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
Ընտր Կ. Պոլիս

Katoghighe Arzakank
Patriarcat Catholique
Pera Constantinople

- ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանց կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհ իմանալով նոյնութեամբ
հրատարակել իրեն ղրկուած ո եւ է յօդուած:
3.— Չեղագիրներ եւ չեն դարձուիր:
4.— Յօդուածներու ձեւագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ
կողմը միայն:
5.— Դրանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուին: